

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎ. ԿՐՈՆԸ



ԿԵՆԴԱԿԱԿԱՆ
ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

576.13
Զ - 39

ԽՈՀԱՆ ԳՈՂՈՎԸՆԻՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՎԱՐԱԿ. ՄՈԽԿԱ, 1931

2 APR 2013

13490

20 JUL 2010

776.13
2-32

Բ. ԶԱՎԱԴՈՎԱԿԻՅ և Ս. ԲԵԶՍՄԵՐՏՆԱՅԱ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՐՈՆԸ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ
ՄԱՍԻՆ

1006 | 76
200

ԽԱՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1931

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՎՈՐՏԵՂԻՑ ԱՌԱՋԱՑԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ԲՈՒՅՍԵՐԸ
ՅԵՐԿՐԻ ՎՐԱ

Բոլոր ժողովուրդների կրոնները և աստվածաշունչը սովորեցնում են, վորպես թե ամեն ինչ աստված ե ստեղծել, Բայց դա նշանակում ե՝ բացատրել մի անհասկանալի միտք մի ուրիշ անհասկանալի մտքով, վորովհետեւ վոչ վոք և վոչ մի ժամանակ աստծուն չի տեսնել և չի կարող բացատրել, թե ինչպես ե նա կարողացել վեց՝ որում ստեղծել աշխարհը:

Հավատացյալները, վորոնք մեզ ուղարկում են աստծու մոտ՝ պատասխան ստանալու համար, իրենք ել չեն հասկանում, թե ինչպես կարող եր կատարվել այդ ամենը։ Նրանց գոհացնում ե այն պատասխանը, վոր կենդանիներին, բույսերը և մարդուն վորպես թե աստված ե ստեղծել, Բայց այդ դեպքում կարելի յե հարցնել. իսկ ով ե ստեղծել աստծուն։ Յեվ այն ժամանակ պարզ կլինի աստվածաշնչի ամբողջ անզորությունը։

Մարդիկ արդեն համոզվել են, վոր բնության յերեսույթներից շատերը, վորոնք առաջ անըմբունելի ելին թվում, այժմ բացատրվում են այդ յերեսույթների զիտական պարզ ուսումնասիրությամբ։ Հենց իրենք՝ կրոնավորները, այժմ չեն համաձայնվում մաղթանք կատարել անձրև գալու համար, յեթե առաջուց զիտական գործիքների ողնությամբ չեն ստուգում, վոր շուտով անձրև ե գալու։

Դիտությունը տալիս ե մեզ կենդանիների և բույսերի ծագման պարզ բացատրությունը, վորը հիմնված ե բնության որենքների մանրամասն ուսումնասիրության վրա։

Այս գրքույկի մեջ մենք ցույց կտանք, թե ինչ ե տվել մեզ կենդանիների ծագման հարցի զիտական ուսումնասիրությունը և թե՝ ինչու առտվածաշնչի ուսումնքը աշխարհի ստեղծագործության մասին վոչ մի արժեք չունի։

Ի՞նչ ԳԻՏԵՆՔ ՄԵՆՔ ՆԵՐԿԱՅՈՒՄՄ ՅԵՐԿՐԻ ՅԵՎ ՆՐԱ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հին ժամանակ, մինչև գիտության զարգանալը, մարդիկ կարծում եին, վոր յերկիրը բաղկացած է Պաղեստինից, Յեզիրականութիւնուց և Բարելոնից և վոր այդ յերկրներից դենը — աշխարհի վերջն եւ: Բայց դրանից հետո մարդիկ պտտել են ամբողջ յերկրագնդի շուրջը, գտել են նոր յերկրներ և համոզվել են, վոր Յեզիրականութիւնը, Բարելոնը և




Նկ. 1. Աշխարհի քարտեզը: Պաղեստինը, Յեզիրականութիւնը և հին հրեաներին հայտնի այլ յերկրները նշանակված են սևով:

Պաղեստինը (այսինքն՝ այն յերկրները, վորտեղ գրվել եւ աստվածաշունչը) աշխարհի այժմյա քարտեզի վրա մի շատ փոքրիկ կետ են ընդում և հավասար են յերկրին մակերևույթի մի 146-րդ մասին:

Յերկիրը ուսումնասիրելու հետ միաժամանակ զարգացան նաև գիտական տեղեկությունները յերկրի յերեսին ապրող կենդանիների և բույսերի մասին: Մեր նախնիքները ուրիշ կենդանիների մասին հասկացողություն չունեին, բացի նրանցից, վորոնցով շրջապատված եին: Ներկայումս գիտությանը հայտնի յեն ավելի քան 1,000,000

տեսակ կենդանիներ և մոտ 500,000 տեսակ բույսեր: Յեթե նույնիսկ ընդունենք, վոր ամենակարող աստված մի վայրկյանում ստեղծել ե մի զույգ կենդանիներ, այդ դեպքում թվաքանական հաշիվը մեզ ասում ե, վոր յերկրիս յերեսին գտնվող բոլոր կենդանիներին և բույսերը ստեղծելու համար աստծուն հարկավոր եր վոչ թե յերկու որ, այլ շուրջ 17 որ: Թեկուղ հենց այդ արդեն ստիպում ե մեզ կասկածանքով վերաբերվելու աստվածաշնչի խոսքերին:



Նկ. 2. Աշխարհի քարտեզը, վոր կազմել են հին հունական գիտնականները:

Առաջին նկարը ներկայացնում է աշխարհի քարտեզը, վորի վրա առանձին նշանակված են Պաղեստինը և նրան շրջապատող յերկրները: Իսկ յերկրորդում աշխարհի քարտեզը նկարված է այնպես, ինչպես հույններն ելին պատկերացնում իրենց: Մենք տեսնում ենք, վոր յերկրը շատ բազմաթիվ անգամ ավելի մեծ ե, քան թե կարծում ելին հին մարդիկ այն ժամանակ, յերբ գրվում եր աստվածաշնչը:

ԿԵՆԴԱԿԻՆԵՐԻ ԲՐԱԾՈ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ


Աստվածաշնչը և կրոնը սովորեցնում են, վոր այնքան կենդանիներ և բույսեր կան յերկրի յերեսին, վորքան ստեղծել ե աստված աշխարհիս ստեղծագործության ժամանակ: Յեթե այդ ճիշտ լիներ, այժմ ել պիտի գոյություն ունենային այն կենդանիներն ու բույսերը, վորոնց ստեղծել ե աստված աշխարհի ստեղծագործության ժամանակ: Սակայն հին ժամանակներից սկսած մարդիկ գտնում

Եյին հողի մեջ այնպիսի կենդանիների քարացած մնացորդները, հետ-
քեր և վուկորները, վորոնք այժմ վոչ մի տեղ գոյություն չունեն:

Մեր նկարները ներկայացնում են այնպիսի բրածո կենդանի-
ների մնացորդները, վորոնք մի ժամանակ ապրել են յերկրի վրա:
Այդ տեսակ բրածո մնացորդներ այժմ ել գտնվում են զանազան
տեղերում պեղումների ժամանակ։ Չափ կողմի նկարներում ցույց




Նկ. 3. Բրածո մնացորդներ անհայտացած կենդանիների։



Նկ. 4. Անհայտացած թեփամորթ-ձկան դանդը։

են տրված անհայտացած բրածո կենդանիների խեցիները, զանդը
մի ահազին անհայտացած կենդանու, վորը ապրում եր ջրի մեջ և
նմանում եր թե թեփամորթ մողեսի և թե ձկան և դրա համար ել
կոչված եր մողեսաձուկ։ աջ կողմի նկարը ներկայացնում ե ան-
հայտացած ձկների հետքերը։

Բայց այդ բրածո մնացորդների մասին վոչինչ չի ասված աստվա-
ծաշնչում։ Անշուշտ, աստվածաշունչը կազմողները, վորոնք վորպես
թե «աստծո ընտրյալներն» են յեղել, վոչինչ չեն իմացել նրանց
մասին։ Անհայտացած կենդանիների մնացորդները, վորոնք գտնվում
են հողի տակ, պարզապես հակառում են աստվածաշնչի այն հաս-
են հողի տակ, պարզապես հակառում են աստվածաշնչի այն հաս-



Նկ. 5. Անհայտացած ձկների հետքեր։

տատմանը, վորի հիման վրա, վորպես թե, աստծու ստեղծած կեն-
դանիները բոլորն ել ապրում են մինչև հիմա։ Հավատացյալ-
ները ստիպված եյին յելք գտնել այդ հակառություն-
ներից և հաշտեցնել աստծու ձեռքով ստեղծելու
հավատը անհայտացած կենդանիների մնացորդների
գյուտի հետ։

ԱՊՐԵԼ ԵՆ ԻՍԿԱՊԵՍ ՅԵՐԿՐԻ ՅԵՐԵՍԻՆ ԱՅՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ,
ՎՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՎՈԶԻՆՉ ԶԳԻՏԵ


Սկզբում հավատացյալները չեյին ուզում ճանաչել բրածո գյու-
տերը վորպես կենդանիների իսկական մնացորդներ։ Նրանք համա-
րում եյին այդ մնացորդները «բնության խաղեր», ինչպես մենք ենք
համարում պատահական խաղեր այն լեռները, ժայռերը կամ ամ-

պերը, վորոնք յերբեմն նմանվում են մարդու կամ ուրիշ կենդանիների: Սակայն պեղումների ժամանակ գիտնականները ավելի և ավելի եյին գտնում ըրածո մնացորդներ և դրանց թվում շատ կմախքներ: Այդ կմախքներից մի քանիսը բերված են մեր նկարներում: Ներքեամ ցույց ե տրված մի ահազին անհայտացած ջրային



Նկ. 6. Անհայտացած մողեսա-ձկան՝ իխտիոզավրի կմախքը:

կենդանու կմախք, վորը իր արտաքինով նմանվում է ձկան, իսկ ներքին մասով — մողեսի: Այդ կմախքը գտնված է Գերմանիայում՝ կաշու մնացորդների հետ միասին:




Նկ. 7. Անհայտացած սոլացող կենդանու-բրոնտոզավրի կմախքը:

Դրդ նկարում ցույց ե տրված մի ահազին անհայտացած խոտանարակ սողացող* կենդանու կմախքը, վորի մարմի յերկարությունը յեղել ե մոտ քսան մետր, իսկ ծանրությունը մոտ 1200 վութ (19.000 կիլոգրամ): Միաժայն նրա վոտների հետքերը բռնում եյին մոտավորապես մի քառակուսի մետր տարածություն: Իր մարմի այդ հսկայական մեծության կողքին աչքի յե ընկնում նրա դմի սաստիկ փոքրությունը:

* Սողացող կենդանիների կամ սողունների թվին են պատկանում ոձերը, մողեսները, կրիաները, կոկորդիլոնները և դրանց անհայտացած նախնիքները:

8-րդ նկարում մենք տեսնում ենք անհայտացած սողունի կմախքը ութ մետր յերկարությամբ, վորի մեջքի վրա կան վոսկրյա ձողեր մի մետր լայնությամբ: Համեմատության համար նրա կողքին կանգնած ե մի մարդ:




Նկ. 8. Անհայտացած սողունի-ստեղծողավրի կմախքը:

Այդ կմախքներն արդեն վոչ մի գեպքում չեր կարելի համարել քարերի պատահական ձևեր, և «բնության խաղի» բացատրությունը մի կողմ պետք եր ձգել:

ԽԶՈՎ ԵՅԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԲԱՑԱՏՐԵԼ ՀԱՎԱՏԱՅՅԱԼԵՐԸ ԲՐԱՄՈ ՄՆԱՑՈՒՅՆԵՐԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

Բրածո մնացորդների գոյությունը բացատրելու համար հավատացյալները հաստատում եյին, վոր այդ մնացորդները «ստեղծագործության փորձեր» են, ուրիշ վոչինչ, այսինքն զրանք մնացորդներն են այն կենդանիների, վորոնց աստված սկզբում սկսել ե ստեղծել, բայց հետո, դժգոհ մնալով իր ստեղծածից, վոչնչացրել ե նրանց: Դուրս ե գալիս, վոր աստված այնքան անշնորհք ստեղծող ու կերտող ե յեղել, վոր մի վորեւե կենդանի ստեղծելուց առաջ նա մի քանի փորձեր ե կատարել, մինչև վոր իր կերտածը կգոհացներ իրեն: Այդ բացատրության հիման վրա աստծուն կարելի յե պատկերացնել, վորպես մի զայրացած ծերունու, վորը կոտրտում ու

վոչնչացնում ե այն ամենը, ինչ վոր ինքն առաջուց շինել ե: Բայց այդ տեսակ աստվածը շատ քիչ ե նմանում այն ռամենակարող և ամենագետ արարչին, վորին հավատում են մարդիկ:



Նկ. 10. Նոյի տապանի մեծությունը ըստ աստվածաշնչի, համեմատած այն կենդանիների հետ, վորոնք, վորպես թե, ազատվել են ջրհեղեղից այդ տապանի մեջ: Իրար վրա թափթփած կենդանիների մասսան Արարատից շատ ավելի մեծ ե:

Ահա թե ինչու այդ բացատրությունն ևս բրածո մնացորդների մասին համոզիչ չե:

ՅԵՂԵԼ ԵՆ, ԱՐԴՅՈՒ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶՐՅԵՂԵԼԸ ՅԵՎ ՆՈՅԻ ՏԱՊԱՆԸ

Աստվածաշնչի մեջ ասված ե համաշխարհային ջրհեղեղի մասին, վորը վորպես թե ուղարկել ե աստված և դրանով վոչնչացրել ե բոլոր կենդանի արարածներին, բացի նրանցից, վորոնք գտնվել են Նոյի տապանում: Հավատացյալները բացատրում եյին բրածո գյուղերի գոյությունը նրանով, վոր համարում եյին դրանց համաշխարհային ջրհեղեղից վոչնչացված կենդանիների մնացորդներ: Բայց տեսնենք, ճշմարտությանը նման ե, արդյոք, աստվածաշնչի պատմածը Նոյն տապանի մասին: Ըստ աստվածաշնչի, աստված հրա-

մայել եր Նոյին վերցնել տապանի մեջ յոթ-յոթ զույգ մաքուր և մի-մի զույգ բոլոր անմաքուր կենդանիներից: Վարտեղ պիտի տեղավորվելին այդ բոլոր կենդանիները: Աստվածաշնչի մեջ ասված ե, թե ինչ մեծություն ուներ Նոյի տապանը. Նրա յերկարությունն եր 300 կանգուն, լայնությունը՝ 50 կանգուն, իսկ բարձրությունը՝ 30 կանգուն: Յեթե այդ չափերը վերածենք սաժենների կամ մետրերից կտեսնենք, վոր Նոյի տապանի մեծությունը յեղել ե՝ մոտ 70 սաժեն (160 մետր) յերկարությունը, 13 սաժեն (27 մետր) լայնությունը և 23 սաժեն (47 մետր) բարձրությունը: Պարզ ե, վոր այդպիսի մի շինության մեջ չեր կարող տեղավորվել բոլոր մի իռնավոր կենդանիների մի փոքրիկ մասն անգամ, յեթե նույն իսկ մի-մի զույգ վերցնելին նրանցից:



Նկ. 11. Արարատ լեռը:

Բայց աստվածաշնչում ասված ե և այն, վոր ջրհեղեղից հետո, վորպես թե, տապանը կանգ ե առել Արարատ լեռան գագաթին, այն ինչ, յեթե մենք հավաքենք նույնիսկ մի-մի զույգ բոլոր կենդանիներից, վորոնք հայտնի յեն ներկայումս և մի կույտ կազմենք նրանցից, կստանանք ավելի մեծ լեռ, քան թե ինքը՝ Արարատը (Արարատի բարձրությունը 5,126 մետր ե): Մեր նկարներում ցույց ե տրված այդ այդտեղ համեմատության ե առնված Արարատի և Նոյի տապանի մեծությունը կենդանիների մասսայի հետ այն դեպքում, յեթե մենք վերցնենք միայն մի-մի զույգ դրանցից և հավաքենք մի տեղ: Մենք ցույց ենք տվել նաև Նոյի տապանի մեծությունը Արարատի համեմատությամբ:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր Աստվածաշնչի պատմությունը Նոյի տապանի մասին կատարյալ անհեթեթություն ե:

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԳԻՏԱԿԱԱՆՆԵՐԸ ՀԱՇՏԵՑՆԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ՀԵՏ

Դիտնականները շարունակում եյին պեղումներ կատարել և ուսումնասիրել կենդանիների բրածո մնացորդները։ Ավելի և ավելի յեր պարզվում, վոր այդ բրածոները մնացորդներն են այն կենդանիների, վորոնք ապրել են յերկրի յերեսին հին ժամանակներում։ Պարզվում եր, վոր յերկրի զանազան շերտերում գտնում եյին կենդանիների զանազանակերպ մնացորդներ։ Ուրեմն պարզ ե, վոր կենդանիները յերկրի յերեսին փռփռխվել են շատ անգամ։ Աստվածաշնչին հավատացող մարդիկ պետք ե վոր համաձայնվեյին, վոր վոչ թե մի, այլ բաղմաթիվ ջրհեղեղներ են յեղել։ Ամեն մի ջրհեղեղից հետո վոչնչացել են այդ ժամանակում ապրող կենդանիները և դրանցից հետո աստված նորից ե ստեղծել նրանց։

Յեվլիսկապես, մի քանի գիտնականներ, վորպեսզի վրկեն մարդկանց դեպի «արարիչն» ու աստվածաշունչը ունեցած հավատը, ստեղծել են ռուսմունք կատաստրոֆների»^{*} մասին։ Ընդունելով այդ ուսմունքը, նրանք հույս են ունեցել և գիտության փաստերից չհեռանալ, և միենույն ժամանակ չխախտել դեպի աստված ունեցած հավատը։

Այդ ուսմունքը պնդում եր, թե յերկրը բաղմաթիվ անգամ փոխել ե իր դեմքը, շնորհիվ պատահած աղետների, ինչպես որինակ՝ յերկրաշարժ, ջրհեղեղ և այլն։ Այդ աղետների ժամանակ կործանվել են բոլոր կենդանիներն ու բույսերը, վորոնք կային աշխարհի յերեսին, վորից հետո աստված նորից ե ստեղծել ուրիշ կենդանիներ։

Համաձայն այդ ուսմունքի, աստված պատկերանում ե մեր առաջ վորպես մի փոքրիկ տղա, վորը տնակներ ե շինում. շինում ե մի տնակ և հետո մի հարվածով քանդում ե այն, վոր ավելի լավը շինի։

Պարզ ե, վոր այն ուսմունքը, վորը աստծուն այսպես եր ներկայացնում, չեր կարող բավարարել հավատացյաներին։ Այդ ուսմունքը ավելի յեւ ընդգծում այն բացատրությունների անզորությունը, վորոնցով ուզում են պահպանած լինել աստվածաշնչի «ճշմարությունը»։

Բայց գիտնականներն ել չեյին կարող հաշտվել «կատաստրոֆների» ուսմունքի հետ. գիտության բոլոր փաստերը ապացուցում են, վոր յերբեք չեն յեղել այնպիսի աղետներ, վորոնք կարողանային վոչնչացնել յերկրի ամբողջ բնակչությունը։ Մյուս կողմից, չնայած անհայտացած և ներկայումս ապրող

^{*}) Կատաստրոֆա բառացի նշանակում ե ցնցումն, վոր դրծ ե ածվում աղետի, դժբախության իմաստով։

կենդանիների խորին տարբերության, — նրանց մեջ կա նաև նմանություն։ Այսպիսով պարզվում եր, վոր այժմյան կենդանիները ազգակից են անհայտացածներին և կենդանիների ծագումը բացատրելու համար գիտնականները պետք ե հրաժարվելու աստվածաշնչից և կրոնից։ Միայն այդ պայմանով կարելի յե գտնել բրածո մնացորդների և գիտության բոլոր փաստերի պարզ բացատրությունը։

ԴԱՐՎԻՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՅԵՎ ԲՈՒՅՍՈՒՐԻ
ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ


Կենդանիների ու բույսերի ծագման գիտական բացատրության զվարար ծառայությունը պատկանում է անգլիացի գիտնական Զառլզ Դարվինին։

Դարվինը մանրակրկիտ կերպով ուսումնասիրել ե կենդանի բնությունը և նրա որենքները և յեկել ե այն յեղբակացության, վոր գիտությունը պետք ե հրաժարվել հավատից դեպի աստվածաշնչը, վորի ասելով, վորպես թե, կենդանիները և բույսերը չեն փոփոխվում և ստեղծված են միմիայն արարչության հրամանով։

Դարվինի ուսմունքի համաձայն, կյանքը յերկրի յերեսին առաջացել ե շատ միլիոնսպիր տարիներ սրանից առաջ։ Առաջին կենդանիները և բույսերը ունեցել են շատ պարզ կառուցվածք, բաղմաթիվ դարերի ընթացքում այդ կենդանիներն ու բույսերը փոփոխվել ու դարձել են ուրիշ ցեղի կենդանիներ և բույսեր, իսկ հները անհայտացել են։

Համաձայն Դարվինի նկ. 12. Զառլզ Դարվին (ծնվել ե 1809 թ. ուսմունքի, յերկրի վրա մեռել ե 1882 թ.), վորը ապացուցել ե ապրող բոլոր արարածները կենդանիների փոփոխականության և ազգացության փաստը։

Ներ ազգակցություն ու նեն իրար հետ, բայց միլիոնավոր տարիների ընթացքում նրանք փոփոխել են իրենց պատկերը։



Այդ ուսմունքը կոչվում է կենդանիների կերպարանափոխության կամ զարգացման թեորիա, կամ կարծիքով՝ եվոլյուցիայի թեորիա; * վորովնա տարբերվում է բոլոր կենդանի արարածների մնայունության և անփոփոխականության այն ուսմունքից, վորը պաշտպանում ելին դիտնականները Դարվինից առաջ, չհամաձայնվելով հրաժարվել աստվածաշնչից և նրա հեթիաթներից:

Մի վորոշ ժամանակ տեղ պայքարը աստվածաշնչի և Դարվինի կողմանակիցների միջև, բայց շուտով այդ պայքարը վերջացավ աստվածաշնչի պարտությամբ: Ներկայումս չկան այնպիսի գիտնականներ, վորոնք կասկածանքով վերաբերվեն դեպի եվոլյուցիայի ուսմունքը:

Տեսնենք այժմ, թե ինչ ապացույցների և փաստերի վրա յե հիմնված Դարվինի ուսմունքը:

ՆՄԱ՞Ն ԵՆ ԱՐԴՅՈՒ ԿԵՆԴԱԼԻՆԵՐԸ ԻՐԱՐ

Յեթե իրավացի յե Դարվինը, վոր կենդանիները առաջացել են իրարից, այդ դեպում, համեմատելով նրանց, մենք պետք են նմանություն գտնենք նրանց միջև:

Նայելով այն կենդանիներին, վորոնք ցույց են տրված մեր նկարներում, մեղ առաջին նվազ թվում ե, վոր նրանք սաստիկ



Նկ. 13. Խլուրդ:




Նկ. 14. Զղեկ:

տարբերվում են իրարից: Հիրավի, այդ կենդանիներից յուրաքանչյուրը ապրում է տարբեր պայմաններում, տարբեր ձևով եւ սընվում և իրենց արտաքինով ել նրանք սաստիկ տարբերվում են մեկ-մեկուց: Շունը կերակրվում է մսով, խլուրդը իր ամբողջ կյանքը անց ե կացնում հողի տակ և կերակրվում է միջատներով, չղջիկը ուտում ե միջատներ, բայց թուչնի նման ապրում ե ողի մեջ, իսկ ծովաշունը ապրում է ջրի մեջ և իր արտաքինով նման ե ձկան:

Համեմատենք թեկուղ այդ կենդանիների առջեի վոտները կամ վերջավորությունները: Մինչդեռ շունը վազելու համար ունի ուժեղ

*Եվոլյուցիա նշանակում է զարդացում, իսկ թեորիա՝ ուսմունք:

յիրկար վոտները, խլուրդի վոտները — հողը՝ փորելու համար — կարծեն և նման են թիակների, ծովաշան վոտները լողալու համար են:



Նկ. 15. Շուն:

և այդ պատճառով նմանվում են քիմուխտների, ողի մեջ ապրելու պատճառով թուչնի և չղջիկի առջեի վոտները դարձել են թիեր:



Նկ. 16. Մովաշուն:

Առաջին հայացքից կարելի յե կարծել, վոր այդ կենդանիները բոլորովին նման չեն իրար և վոչ մի ընդհանուր կապ չկա նրանց մեջ:

Սակայն յեթե մենք մանրամասնորեն ուսումնասիլենք այդ կենդանիներին և համեմատենք նրանց վոչ միայն արտաքուստ, այլև նրանց կմախքները, կտեսնենք,

վոր չնայած արտաքին տարբերությանը, նրանց վոսկորների կառուցվածքի մեջ մեծ նմանություն կա:

Այս նկարներում ցույց են տրված զանազան կենդանիների կմախքներ և մենք պարզ տեսնում ենք, վոր բոլոր այդ կմախքների մեջ տեղով

անցնում ե վողնաշարը, վոր բաղկացած ե առանձին վոսկորներից —




Նկ. 18. Թռչնի կմախք:




Նկ. 19. Զգլիկի կմախք:

վողներից (շնորհիվ դրան այն բոլոր կենդանիները, վորոնք վողնաշար ունեն, կոչվում են վողնաշարավոր կենդանիներ), բոլորն ել ունեն զլուխ, պարանոց, իրան, պոչ:



Նկ. 20. Խլուքդի կմախք:


Բոլոր այն կենդանիների այն վոսկորները, վորոնք կազմում են կենդանիների գավակը, նմանում են իրար, առջեր և յետեր վոտները բաղկացած են իրար նմանող վոսկորներից, կրծքի վանդակում, գանգի մեջ և այլն կարելի յե գտնել միմյանց նմանող վոսկորներ:



Նկ. 21. Շովաշան կմախք:

Ուշադրությամբ դիտելով այդ կմախքները, չի կարելի չտեսնել, վոր նրանք ընդհանրապես կառուցված են իրար շատ նման:

Կենդանիների կմախքների նմանությունը, նույնիսկ այնպիսի կենդանիների, վորոնք իրենց արտաքինով սաստիկ տարբերվում են իրարից, հասկանալի յե դառնում միայն այն ժամանակ, յերբ մենք ընդունում ենք Դարվինի բացարձությունը այն մասին, թե բոլոր կենդանիները ազդակից են իրար, վոր նրանք առաջացել են իրարից:




Նկ. 22. Շան կմախքը.

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՎՈՂՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԵԶ


Նմանությունը վողնաշարավոր կենդանիների միջև, հետևաբար և նրանց ծագումը մի ընդհանուր արմատից, ավելի պարզ ե յերե-վում, յերբ մենք համեմատում ենք զանազան կենդանիների մար-մի միենույն մասերը։ Այդ կողմի նկարի վրա ցույց են տրված զա-նազան կենդանիների առջևի վերջավորությունները։ առաջին շար-քում նկարված ե մարդու ձեռքը, ծովաշան թաթը, խլուրդի թաթը, յերկրորդ շարքում — չղջիկի թեր, թունի թեր և, վերջապես, կոկորդիլոսի թաթը։

Այդ վերջավորությունները զանազան կենդանիների մոտ տար-բեր նպատակի յեն ծառայում։ որինակ, ձեռքը ծառայում ե մար-դուն վերցնելու համար, խլուրդի թաթը ծառայում ե հողը փորե-լու նպատակով, ծովաշան թաթը ջրում լողալու համար, թունի և չղջիկի թեր — թունելու համար։ Յեվ չնայած նրան, վոր այդ վեր-ջավորությունները զանազան տեսակ են գործադրվում, այնուամե-նայնիվ իրենց գլխավոր գծերով նրանք կառուցված են միատեսակ և բաղկացած են միենույն վոսկրներից՝ ուսի մի վոսկրից, բազկի յերկու վոսկրներից և մի քանի շարք մանր վոսկրներից, վորոն-ցից բաղկացած են թաթերը և մատները։ Այդ վերջավորությունների արտաքին տեսքի մեջ կարելի յէ տարբերություն գտնել։ Որինակ, խլուրդի վոտի բոլոր վոսկրները շատ կարճ են, ընդհա-կառակն, չղջիկի բոլոր վոսկրները, վորոնցից կաղմած են մատ-

ները, խիստ ուժեղ ձգված են յերկարությամբ և նրանց մեջ ընկած ե թռչողական թաղանթը, իսկ թունի վոսկորները, վորոնք կազմում են թաթը, միանում-դառնում են մի վոսկը և մատներից մնում են միայն չամրացած փոքրիկ վոսկորներ։ Բայց, չնայած այդ տարբե-րություններին, պարզ ե, վոր այդ վերջավորությունները շինված են միենույն պլանով և վոր դա միենույն վերջավորությունն ե, վորը փոփոխվել ե կյանքի զանազան պայմաններից ստիպված։



Նկ. 23. Մարդու ձեռքը։ Ծովաշան թաթը։ Խլուրդի թաթը։



Նկ. 24. Չղջիկի թեր։ Թունի թեր։ Կոկորդիլոսի թաթը։

Յեթե, ինչպես ասված ե աստվածաշնչում, աս-
տված ստեղծել ե ամեն մի կենդանուն առանձին-
առանձին, այն ժամանակ անհասկանալի յէ, թե ինչու
զանազան կենդանիների վերջավորությունները իրենց
ներքին կառուցվածքով նման են իրար։

ՄԻՄԻԱՅՆ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻՑ ԶԻ ԿԱՐԵԼԻ ԴԱՏԵԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յերբ մենք համեմատում եինք կենդանիներին, վորոնք առում են տարբեր պայմաններում՝ ջրի մեջ, ողում, գետնի տակ և գետնի յերեսում, մենք տեսանք, վոր նրանք շատ բանով նման են իրար, թեև արտաքուստ սաստիկ տարբերվում են միայնցից։ Յեզ ընդհակառակը, շատ կենդանիներ արտաքինով սաստիկ նման են իրար, բայց ազգակցության կողմից խիստ հեռու յեն իրարից։ Որինակ յեթե մենք համեմատենք կետին ձկան հետ, կտեսնենք վոր արտաքուստ նրանք նման են իրար և զուր չե, վոր ժողովուրդը




Նկ. 25. Դրենլանդական կետ.

իր հեքիաթներում նրան «կետ-ձուկ» անունն ե տալիս։ Ձկան նման, կետը ունի քիմուխանները մարմի ծայրում, մեջքի վրա և մարմի վարի մասում և ձկան նման յերկար մարմին ունի։

Բայց չնայած դրան, կետը ձուկ չե և այդ յերեսում ե այն ժամանակ, յերբ մենք համեմատում ենք կետի և ձկան կմախքները։ Մերնկարներում այդ յերկու կմախքներն ել կան։ Կետի կմախքում պոչի քիմուխտի տեղը վոչ մի վոսկոր չկա, իսկ առջեկի քիմուխտների մի տակ մենք գտնում ենք հինգ մատներ ունեցող վերջավորություններ, ինչպես շներինը կամ ծովաշներինը։ Բացի այդ, կետի մարմի յետերի մասում մենք գտնում ենք փոքրիկ վոսկը և դրանք յետերի վոտների և գավակի մնացորդներն են։ Իսկ ձկան


կմախքի մեջ բոլորովին չկան հետքեր վոչ առջեկի և վոչ ել յետերի վոտների, չկան նաև գավակի մնացորդներ, իսկ այնտեղ, վորտեղ ձկան քիմուխտներն են, կմախքի վրա տեսնում ենք մանրիկ վուկրներ, վորոնք վոչնով նման չեն կետի կամ ուրիշ կենդանիների հնդմատնյա վերջավորություններին։

Զննելով կետի կմախքը, մենք պարզ տեսնում ենք, վոր նա ավելի մոտ ե շանը, կատվին, մկանը, քան թե ձկան, իսկ ինչնոք բացատրել, վոր կետը և ձուկը նման են իրար։ Խնդիրը նրանումն ե, վոր կյանքի միատեսակ պայմանները կենդանիների համար միատեսակ ձեւ են ստեղծում և միմիայն արտաքին տեսքից ձի կարելի դատել կենդանիների ազգակցության մասին։



Նկ. 26. Պերկ ձկան կմախքը։

Կենդանիների ծագումը և նրանց միջև յեղած ազգակցությունը գտնել կարելի յե միմիայն նրանց կմախքը և ներքին կառուցվածքը ուսումնասիրելուց հետո։



Նկ. 27. Դրենլանդական կետի կմախքը։

Կետի որինակով մենք նորից տեսնում ենք աստվածաշնչի հայցքի սնակներությունը։ Իսկապես, ինչու աստված կետին ստեղծելու տվել ե նրան ձկան քիմուխտների վոխարեն այնպիսի վոտներ, ինչպես զագաններն ունեն, ինչու յե ավել նրան գավակի մնացորդ, վորից կետը բոլորովին չի ոգտվում։

ՎՈՐՔԱՆ ԲԱՐՁՐ Ե ԶԱՐԳԱՑԱԾ ԿԵՆԴԱՆԻՆ, ԱՅՆՔԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐԴ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ՈՒԽԻ ՆՐԱ ՈՒՂԵՂԸ

Կառուցվածքի նմանություն, ապա ուրեմն և ընդհանուր ծա-
գումն մենք տեսնում ենք նաև զանազան կենդանիների ուղեղները
համեմատելիս:

Այս նկարների մեջ բերված են ձկան, գորտի, թռչնի, շան,
մարդանման կապկի և մարդու ուղեղները:




Նկ. 32. Ձկան ուղեղը.



Նկ. 33. Գորտի ուղեղը.

Նրանք բոլորն ել կազմված են միատեսակ մասերից՝ — մեծ
ուղեղից, միջանկալ ուղեղից, միջին ուղեղից, ուղեղիկից և վերջա-
պես յերկարավուն ուղեղից:



Նկ. 34. Թռչնի ուղեղը.

Ավելի պարզ կառուցվածք ունեցող կենդանիների, — ձկան,
դորտի, — բուլոր այդ մասերը դասավորված են իրար յետերից, բայց

արդեն թռչնի մեծ ուղեղը մեծանում և ծածկում ե միջանկյալ և
միջին ուղեղները: Շան և մարդանման կապկի մեծ ուղեղները ավելի
յեն զարգացած և ծածկված են զալարներով: Մարդու ուղեղը նման է
շան և մարդանման կապկի ուղեղին և տարբերվում ե նրանով, վոր
ավելի մեծ և ավելի շատ զալարներ ունի:




Նկ. 35. Շան ուղեղը:



Նկ. 36. Մարդանման կապկի —
շիմպանզեյի ուղեղը:

Յեթե, ինչպես ասված ե աստվածաշնչում, աստված ստեղծել ե
մարդուն իր պատկերի նման, այն ժամանակ ինչով բացատրենք,
վոր մարդու ուղեղը նման է շան և կապկի ուղեղներին: Յեթե
ճիշտ ե, վոր աստված ե ստեղծել կենդանիներին, ինչով պիտի բա-
ցատրել, վոր բոլոր կենդանիների ուղեղները նման են մեկ-մեկու-




Նկ. 37. Մարդու ուղեղը:

Համեմատելով ուղեղները, մենք նորից տեսնում ենք, վոր
կենդանիները առաջացել են իրարից և վոր ավելի պարզ կենդանի-
ներից զարգացել են ավելի բարդ կենդանիները: Իսկ մարդուն մենք
պետք ե մտցնենք բոլոր կենդանիների ընդհանուր ընտանիքի մեջ:

ՇԱՏ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՈՒՆԵՆ ԱՆՈԳՈՒՏ ՈՐԳԱՆՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՆՈՒՅՆՈՒՅ
ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՅԵՂԱԾ ԱԶԳԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ԹՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ ՎՈՐՈՇԵԼ ՆՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ

Մի քանի կենդանիներ ունեն այնպիսի որգաններ, վորոնք վոչ
մի նպատակի չեն ծառայում, չեն գործազրկում և վոչ միայն անո-
դուս են, այլ և վսասակար այդ կենդանիների համար։ Որինակ,
խլուրդի համար ավելորդ որգաններ են նրա աչքերը։ Խլուրդը ստոր-
յերկրյա կենդանի յե, կերակրվում ե միջատներով, վորդերով և
դաշտամկներով, Ալրելով հողի տակ, նա վոչ միայն կարիք չունի
աչքերի, այլ և այդ աչքերը վսասակար են նրա համար, վորովհետեւ
հեշտությամբ կարող են կեղտով
լեցվել և հիվանդանալ, Այնուամե-
նայնիվ, ինչպես մենք տեսնում ենք
նկարի վրա, ուր խլուրդի գանգն ե
պատկերացրած, նա ունի աչքեր,
թեև այդ աչքերը և շատ փոքր են,
և անպետք են տեսողության համար։

Յեթե խլուրդին աստված ե
ստեղծել, ապա ինչու յե տվել նրան անպետք և նույնիսկ վսասա-
կար որգաններ։ Իսկ զիտությունը շատ պարզ բացատրություն ե



Նկ. 39. Խլուրդ։



Նկ. 40. Դեղնափոր մողեսի
վոտների մացորդները։

տալիս և խլուրդի աչքերին, և նրա այլ ավելորդ որգաններին.
Խլուրդը առաջացել ե այնպիսի կենդանիներից, վորոնց աչքերը լուվ
զարգացած են յեղել։

Հաճախ այդ ավելորդ որգանները ոգնում են զիտությանը վո-
րոշել կենդանիների ծագումը և նրանց ազգակցությունը։ Որինակ,

ոձերը վոտներ չունեն և չարժվում են, գալարելով իրենց մարմինը,
«սողալով»։ Աստվաշնչում ասված ե, վոր աստված անիծել ե ոձին
Յեվային խարելու և գայթակղեցնելու պատճառով և ասել ե, վոր
ոձը պիտի սողա իր փորի վրա։

Ուսումնասիրելով, թե ումից են առաջացել ոձերը, գիտնական-
ները համեմատել են նրանց ուրիշ սողացող կենդանիների հետ և
գտել են այնպիսիներին, վորոնց կմախքների վրա պահպանվել են
փոքրիկ, չգարգացած վոտներ։



Նկ. 41. Դեղնափոր մողեսը և նրա կմախքը։

Մենք մեր նկարի վրա ցույց ենք տալիս այդպիսի մի անվոտ
սողունի — դեղնափոր մողեսին։ Նա շարժվում է ոձի նման, բայց
նրա կմախքի վրա, այնտեղ, ուր վերջանում էն կողերը, յերեսում
են վոտների հետքեր։ Կմախքի այդ մասը մենք տալիս ենք 26-րդ
եջում առանձին՝ մեծացրած դիրքով։

Վոտների մացորդներ զանվել են վոչ միայն դեղնափոր մո-
ղեսների կմախքի վրա, այլ և մի քանի անվոտ մողեսների և ոձերի
վրա, վորոնք այսպիսով, կարծես մոտեցել են խսկական ոձերին։
Դա վկայում ե այն մասին, վոր ոձերը և անվոտ մողեսները

առաջացել են այնպիսի կենդանիներից, վորոնք վոռաներ են ունեցել:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇՎՈՒՄ Ե ՆԱՅԵՎ ՍԱՂՄԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Յերբ մենք համեմատում ենք զանազան կենդանիների սաղմերը, տեսնում ենք, վոր նրանց մեջ մեծ նմանություն կա: Գիտությունը



Նկ. 42. Ասաշին շարքում յերկայնությամբ — ձկան, թռչնի, ճագարի, մարդու սաղմերն են զարդարացման սկզբնական շրջանում:
Միջին շարքում — նույն սաղմերը սպիտի զարդացած դրությամբ:
Յերրորդ շարքում — նույն սաղմերը, արդեն կազմակերպված:

սաղմերի ուսումնասիրությամբ ևս սահմանում են նմանություն կենդանիների միջև: Հայտնի յեւ, վոր բոլոր կենդանիները զարդանում

են ձվից: Արույի սերմով բեղմնավորված ձուն տալիս ե սաղմի սկիզբը: Մեր նկարի վրա ցույց են տրված ձկան, հավի, ճագարի և մարդու սաղմերը: Վերևի շարքում նկարված են այդ կենդանիների ջանել սաղմերը, միջին շարքում — նույն սաղմերն են, բայց արդեն ավելի զարդացած և վերջապես վարի շարքում — նույն սաղմերը՝ ձվից դուրս գալուց քիչ առաջ:

Յեթե համեմատենք սաղմերը զարդացման վերջին աստիճաններում գտնված ժամանակ (վարի շարքը), այդ դեպքում մեզանից ամեն մեկը անսխալ կերպով կտարբերի ձկան, թռչնի, ճագարի և մարդու սաղմերը: Բայց համեմատելով ջանել սաղմերը (վերին և միջին շարքերը), մենք տեսնում ենք, վոր դժվար են նրանց իրարից տարբերելու: Նրանց բոլորի յերկայնածե մարմինը վերջանում ե պոչով, բոլորն ել կողքից, աչքերի յետեւ ունեն աղեղներ, վորոնց վրա դրված են որինակ, ձկան քիմուխտները, իսկ նրանց մեջ — քիմուխտային ճեղքերը: Յեթե ձկան սաղմի վրա մենք տեսնում ենք քիմուխտային աղեղներ և ճեղքեր, — դա հասկանալի յեւ, վորովհետև ձկան մարմնի վրա այդ տեղում կազմվում են քիմուխտները, վորոնք հարկավոր են նրա ջնշառության համար՝ ջրի մեջ: Բայց ինչով բացատրել քիմուխտային ճեղքերը հավի, ճագարի և մարդու սաղմերի վրա: Չե վոր այդ սաղմերը ջրում չեն զարդանում: Յեվ վերջապես ինչով բացատրել, վոր մարդու սաղմը պոչ ունի:

Աստվածաշնչում ասված ե, վոր ամեն ինչ աստված ե ստեղծել, բայց այն ժամանակ անհավատալի յեւ մնում, թե ինչու զանազան կենդանիների սաղմերը նման են իրար և ինչու մարդու սաղմը նման ե ուրիշ կենդանիների սաղմերին:


Իսկ գիտությունը սաղմերի նմանությունը բացարձում է նրանով, վոր կենդանիները առաջացել են մեկ-մեկուց, ուրիշ խոսքով՝ ազգակիցներ են:

ԲՈՒՅՍԵՐԸ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՏԵՍՔՆ ՈՒ ԶԵՎԸ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ

Կրոնի և աստվածաշնչի համաձայն, բոլոր արարածներին ստեղծել ե աստված միանգամ ընդ միշտ և ուրեմն նրանք այլիս փոփխվել չեն կարող:


Սակայն մեր աչքի տուած ամեն ինչ բնության մեջ անընդհատ փոփխվում եւ: Որինակ, մի քանի բույսեր, պայմանների փոփխության դեպքում, այնքան սաստիկ կերպարանափոխվում են, վոր դժվար ե լինում ասել, թե զրանք միևնույն բույսերն են:

Համեմատեցնք մեր նկարների վրա ցույց տված սոճիները, վորոնցից մեկը բսած և անտառի ծայրում կամ ձանապարհի վրա, իսկ մյուսը — լինտ անտառում։ Ուրիշ սոճիներից չճնշված ու ազատ



Նկ. 43. Ազատ մեծացած սոճի

մեծացած սոճու տերեները լայն են, սաղարթախիտ և բունը կարճ ե, իսկ անտառում բսած սոճու բունը բարակ ե, տերեները քիչ



Նկ. 44. Լինտ անտառում մեծացած սոճիներ։

Են և այն ել գտնվում են ծառի բարձունքներում։ Ինչպես տեսնում ենք, սոճու միենույն տեսակները տարբեր պայմանների մեջ տարբեր ձեեր են ստանում։

Համեմատենք յերկու կաթնածաղիկներ, վորոնք ցույց են տըրպած մեր նկարների վրա։ Դրանցից մեկը բսել և հովտի մեջ —



Նկ. 45. Կաթնածաղիկը, սարում բսած։

Նրա ցողունը բարձր ե՝ տերեները լայն և ինքն ել մեծահասակ։ Մյուս կաթնածաղիկը, վոր տարբերացրել են սարում, սաստիկ




Նկ. 46. Հովտում բսած կաթնածաղիկ։

փոխել և իր տեսքը — փոքրահասակ ե, ցողունը բարակ, ցած, և տերեները շատ փոքրիկ։

ՅԵՐԵՄՆ ՍԻԱՅՆ ՈԴԻ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՎԵԼՈՎ. ՓՈԽՎՈՒՄ Ե
ԿԵՆԴԱՆՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ

Կենդանիների գույնի և մեծության փոփոխությունները յերբեմն կախված են ողի ջերմության (բարեխառնության, տեմպերատուրայի) փոփոխությունից:

Մեր նկարի վրա ցույց են տրված յերկու թիթեռներ, թիթեռնց գույնով և թե՛ մեծությամբ նրանք այնպես տարբերվում են յերարից, վոր առաջ զիտնականները համարում եյին նրանց զանազան ցեղի թիթեռներ։ Միայն բաղմաթիվ փորձերից հետո զիտնականներին հայտնի գարձավ, վոր դրանք միևնույն ցեղիցն են, միայն մեկը զարգանում ե գարնանային ձվից, մյուսը — աշնանային։ Այդ թիթեռները տարեկան յերկու անգամ են ձու ածում. մի անգամ գարնանը, և այդ ձվերից թիթեռներ են դուրս գալիս աշնանը և յերկրորդ անգամ ձու յեն ածում աշնանը, և այդ ձվերից թիթեռներ են ծնվում գարնանը։ Աշնանային ձվերից յելած թիթեռները ավելի փոքր են, չեկ գույն ունեն, իսկ գարնանային ձվերից յելած թիթեռները ավելի մուգ են, խոշոր և սպիտակ բծեր ունեն թևերի վրա։



Նկ. 47. Աշնանային ձվից յելած թիթեռ։ Նկ. 48. Գարնանային ձվից յելած թիթեռ։



Այս փոփոխությունները, ինչպես նաև մի շարք այլ փոփոխություններ կարելի յե ստանալ արհեստականորեն։ Գիտնականները հետևյալ փորձն են կատարել թիթեռների վրա։ — Գարնանն ածած ձվերը — ցածր ջերմության մեջ պահպելով — տալիս են աշնան թիթեռներ, իսկ աշնան ածածները — ավելի բարձր ջերմության մեջ՝ տալիս են գարնան թիթեռներ։


ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԽՎԱԾ ԵՆ ԱՅՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ,
ՎՈՐՈՆՔ ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՑ ՈՐԳԱՆՆՉՄՄ ՄԵՋ

Կենդանիների մեջ զանազան փոփոխություններ կարելի յե առաջ բերել այլ միջոցներով ևս։


Ուսումնասիրելով մարդկանց և ուրիշ կենդանիների զանազան հիվանդություններն ու այլանդակությունները, զիտնականները գտել են, վոր որգանիզմի կանոնավոր կյանքը կապված է այն հյութերի հետ, վոր պատրաստում են զանազան գեղձերը. այդ գեղձերից մեկը, վոր կոչվում է վահանագեղձ, գտնվում է վզի վրա, կոկորդի մոտ։ Վահանագեղձի արտադրած հյութերի նվազ կամ ավել լինելու դեպքում կենդանիները սաստիկ փոխվում են։

Այստեղ ցույց են տրված յերկու յեղբայր՝ շնիկներ. ձախ յեղբոր վահանագեղձը դեռ շատ փոքր հասակում հեռացրել են, և այդ պատճառով նա մնացել է փոքրահասակ, փափքամարմին, հիվանդություն նրա կողքին կանգնած ե նրա յեղբայրը բնական վահանագեղձով — բոլորովին առողջ։

Ցույց ենք տալիս յերկու հավեր, մերկ (տես նկ. 50) և ճերմակած (տես նկ. 51) փետուրներով։ Ձախ հավի մերկությունը առաջացել է նրանից, վոր նրան կերակրել են վահանագեղձով։ Այդ տեսակ հավի փետուրները դուրս դալուց հետո



Նկ. 49. Շան ձագը, վորի վահանագեղձը հանել են (ձախից) և նրա յեղբայրը (աջից) բնական դրությամբ։



Նկ. 50.



Նկ. 51.

(փորձը կատարելուց սովոր աջ հավը սկ գույն ուներ) սկ փետուրների փոխարեն հայտնվում են մեծ քանակությամբ սպիտակ փետուրներ։

Այսպիսով և փետրաթափությունը, և փետուրների գույնը, և կենդանիների մի շաբք այլ փոփոխությունները գիտությունը կարող ե բացատրել առանց դիմելու աստծուն:

**ՈՒՍՄՈՒՆՔԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՑԱՏՐՈՒՄ
Ե ՆՐԱՆՑ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նա, ով շատ ե ճանապարհորդել, զիտե, վոր զանազան յերկրներում ապրում են զանազան տեսակ կենդանիներ: Կրոնը և աստվածաշունչը չեն կարող բացատրել մեզ վոչ կենդանիների բնակավայրի ընտրության պատճառը և վոչ ել նրանց բազմազան լինելու պատճառը:



Նկ. 52. Պարկավոր խոտակեր կենդուրու (ձաղը պարկի մեջն ե):

Դարվինը ճանապարհորդել ե աշխարհի շուրջը և մնացել ե զարմացած, վոր մի քանի յերկրներում ապրում են այնպիսի կենդանիներ, վորոնք բոլորովին նման չեն ուրիշ յերկրներում ապրողներին: Որինակ Ավստրալիայում կան պարկավոր կենդանիներ, վորոնք այդպիս են կոչվում այն պատճառով, վոր փորի կողքին ունեն կաշվեմի ծալք, կամ պարկ: Նրանք ծնում են չզարգացած (թերած) ձագեր, կոկոսի ընկուղի չափ, և ծնվելուց հետո այդ ձագերը պահպում, կերպարվում են պարկի մեջ:

Մեր նկարների վրա բերված են հետեյալ պարկավոր կենդանիները՝ կենդուրու, յերկվորվայնի և վոմբատ:

Հստ աստվածաշնչի միանգամային անհասկանալի յե, թե ինչու հենց Ավստրալիայում են ապրում ուրիշ կենդանիներին չնմանվող այդ կենդանիները, իսկ զիտնականները գիտեն, վոր վոչ միայն կենդանիներն ու բույսերն են փոփոխվում, այլ նաև յերկրի մակերեսույթը: Յամաքում են ծովերը, քայլայվում են սարերը, նոր սարեր են գոյանում և այլն:

Յերկրագնդի մասին գոյություն ունեցող գիտությունը պարզել ե նույնպես, վոր Ավստրալիան հաղարավոր տարիներ սրանից առաջ միացած ե յեղել Ասիայի ցամաքի հետ, բայց այդ միացումը յերկար չի տևել — Ավստրալիան բաժանվել ե Ասիայից ջրով: Այն



Նկ. 53. Յերկվորվայնի — պարկավոր գեշտիկ կենդանի:



Նկ. 54. Վոմբատ — պարկավոր կրծող գեշտառիկ կենդանի:


ժամանակ, յերբ Ավստրալիան ցամաքով միացած եր Ասիային, ամեն տեղ ապրում ելին միմիայն պարկավոր կենդանիներ և հենց այդ ժամանակ ել նրանք բնակություն են հաստատել Ավստրալիայում: Վոր գաճիշտ ե, — յերեսում ե նրանից, վոր պարկավոր կենդանիների բրածո մնացորդներ գտնում են և Ասիայում, և նույնիսկ Յեվրոպայում: Իսկ յերբ հետագայում բազմացան մեզ ծանոթ կաթնասուն կենդանիները, նրանք հալածեցին համարյա ամեն տեղից պարկավորներին, բացի Ավստրալիայից, վորովհետև Ավստրալիան այդ ժամանակ բաժանված եր ծովով և այնտեղ չկարողացան անցնել ավելի ուշ առաջ յեկած կենդանիները:

**ԱՍՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԶԻ ԿԱՐՈՂ ԲԱՑԱՏՐԵԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՏԵՂԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հստ աստվածաշնչի անհասկանալի կիներ և այն, թե ինչու Հարավային Ամերիկայի կենդանիները այդպես սաստիկ տարրերվում

Են Հյուսիսային Ամերիկայի կենդանիներից, չնայած վոր այժմ այդ յերկու յերկրները միացած են մի նեղ պարանոցով և իրար մոռ են գտնվում։

Հարավային Ամերիկայում գտնվում են առանձին տեսակի կենդանիներ, ինչպես խեցերեն (զրահապատ կենդանի), ծուլամորթը և մրջնակերը։ Նրանց նախորդների բրածո մնացորդները գտնվում են յերկրագնդի այլ վայրերում։ Դա նշանակում է, որ առաջ այդ կենդանիները ապրում ենին ուրիշ յերկրներում, իսկ այժմ նրանք պահպանվել են միայն Հարավային Ամերիկայում և Մեքսիկայում։



Նկ. 55. Խեցերե (զրահակեր)։

Նույնպես անհասկանավի կմնար ըստ աստվածաշնչի, թե ինչու Մադագասկար կղզում, վորը շատ մոտ է Հարավային Աֆրիկային, ապրում են այնպիսի կենդանիներ, վորոնք չկան Աֆրիկայում։ Մադագասկարի կենդանիների մեջ հետաքրքրական են մանավանդ կիսակապիկները. զրանք ապրում են միմիայն այդ կղզու վրա և Հարավային Ամերիկայում, իսկ Աֆրիկայում ամենաին չկան։

Գիտության համար կենդանիների այդ տեսակ տարածումը լիովին հասկանալի յե։ Յերկրագնդի պատմությունը սովորեցնում է մեզ, վոր Հարավային և Հյուսիսային Ամերիկան միացել են շատ մոտ ժամանակներս, իսկ առաջ Հարավային Ամերիկան բաժանված եր Հյուսիսայինց ջրով — ահա թե ինչու և խեցերեները, և՝ ծուլամորթները, և գոյության կովին քիչ հարմարված այլ կենդանիները պապհանվել են Հարավային Ամերիկայում, իսկ ուրիշ տեղերում անհայտացել են։ Իւկ այժմ, յերբ Հարավային Ամերիկան միացած ե Հյուսիսայինի հետ ցամաքով, այդ կենդանիները մեր աչքի առաջ մեռնում — անհայտանում են ու չեն կարողացել բնակավայր գտնել հյուսիսում։

Իսկ ինչ վերաբերում է Մադագասկարին, յերկրագնդի պատմությունն ասում է, վոր չնայած կղզու մոտիկ լինելուն Աֆրիկայից, Մադագասկարը բաժանված է նրանից շատ խոր ծովանեղուցվ

և միայն շատ առաջ (տասնյակ միլիոնավոր տարիներ սրանից առաջ) միացած է յեղել Աֆրիկայի հետ ցամաքով։ Ընդհակառակն, ավելի հեռու գտնվող Հարավային Ամերիկայի հետ Մադագասկարը համեմատաբար ավելի մոտ ժամանակում է միացած յեղել ցամաքով։ Դրա համար ել Մադագասկարում ապրում են կիսակապիկներ և այլ կենդանիներ — Հարավային Ամերիկայի բնակլչների նախնիքները։



Նկ. 56. Ծուլամորթ։ Այս կենդանին զիշերը վորսի յե յելում, իսկ ցերեկները կախ են կնկնում ծառից գլուխը ցածր ցածր։

Յեթե ամեն ինչ աստծուց ե կախված, ինչպես սովորեցնում են կրոնը և աստվածաշունչը, ինչն ե խանդաքարել նրան բնակեցնելու կղզիներում այն կենդա-



Նկ. 57. Մադագասկարում ապրող կիսակապիկներ։

նիներին, վորոնք ապրում են հարեան ցամաքի վրա։ Աստծու ինչին եր պետք ստեղծել կղզիների համար հատուկ կեն-

Դանիներ: Յերեխ նրա համար, վոր Նոյին՝ ծանրաբեռնե այդ կենդանիներին համաշխարհային ջրհեղեղից փրկելու հոգսերով։ Միևնույն ժամանակ հարց և ծագում, թե ի՞նչպես ե ջրհեղեղից հետո Նոյը տեղավորել կենդանիներին ամբողջ աշխարհի յերեսին, քանի վոր թե նա ինքը, և թե նրա ժամանակակից այլ հրեյաները նույնիսկ չդիտեին Ամերիկայի, Ավստրալիայի և այլ յերկրների գոյության մասին։

Ի՞նչ ՊԱՏՇԱՌՈՎ ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՅԵՐԿՐԻ ՎՐԱՅԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ԲՈՒՅՍԵՐԸ

Շատերը հարցնում են, — յենթադրենք, վոր կենդանիներին և բույսերը աստված չի ստեղծել, ապա ինչո՞ւ համար և կատարվում այդ մշտական փոփոխությունը և յերկրի բնակչության իրար հաջորդելը, վոմանց անհայտանալը, մյուսների առաջանալը։

Դարվինը դրան ել տալիս երանական զիտական բացատրություն։ Նա հաշվել է, վոր շատ ավելի մեծ թվով կենդանիներ և բույսեր են ծնվում, քան թե կարող ե տեղափորվել և սնունդ գտնել յերկրի վրա։ Փրփրուկ կամ փայլունկ ձկների տասնյակ հազարավոր ձկերից ապրում են մեկը կամ յերկուսը, մնացածները վոչնչանում են ամերիկական անվանում ե գոյության կորի։

Նում են։ Մի թխտենին աշնանը տալիս ե մի քանի միլիոն սերմեր, բայց այդ սերմերից մեկը կամ յերկուսն են միայն աճում և ծառդառնում։ Կյանքի համար մղվող այդ կորիվ Դարվինը անվանում ե գոյության կորի։

Ակնայտ ե, վոր կյանքի համար մղվող այդ կորի մեջ կենդանի յեն մնում միայն այնպիսիները, վորոնք թեկուզ մի փոքրիկ առավելություն նկան կորիվ ու մկան հետունեն իրենց յեղայրների հանդեպ։ Ավելի հարմարվածների այդ ապրելը և թույլերի վոչնչացումը Դարվինը անվանել ե բնական ընտրություն։

Գոյության կովի և ընտրության շնորհիվ նույնիսկ ամենափոքրիկ փոփոխությունը մորթու գույնի, վոտների յերկարության, մարմնի ամրության մեջ—միջոց և տալիս ապրելու ավելի լավ հարմարվածներին։

Այսպես, որինակ, մեր նկարի վրա ցույց ե տրված ու մուկը, վորը դեռ ևս քիչ առաջ տարածված եր նոուսաստանում, իսկ այժմհամարյա անհետացել ե, վորովհետև նրան ամեն տեղից քում— փախցնում և ավելի ուժեղ և կյանքին ավելի լավ հարմարված գորշագույն մուկը։

Շատ կենդանիների համար կորստացեր և յեղելամենից ավելի լավ հարմարված կենդանու—մարդու յերեալն ու տարածվելը յերկրի յերեսին։

Մարդու շնորհիվ վոչնչացվել են կամ անհետանալու մոտ են բազմաթիվ կենդանիներ, վորոնք դեռ ևս մոտ անցյալում շատ տարածված եյին աշխարհի յերեսին։ Մեզանում իսչ Միության մեջ անհայտացել կամ անհայտանում են վայրի ցուլերը (զուբր), վայրի յեզները, քարայծերը, կուղբը (բոբր), վայրի ձիյերը և այլն։

Յեզ, ընդհակառակը, մարդու շնորհիվ յերեան են գալիս տնային անասունների, չների, թռչունների նոր ցեղեր, վորոնց մոտ անցյալում դեռևս վոչ վոք չեր ճանաչում։ Մեր նկարի (60) վրա ցույց ենք տալիս հավերի զանազան ցեղեր, վորոնց առաջ ե բերել մարդը.



Նկ. 60. Հավերի զանազան ցեղեր։



Նկ. 59. Գորշագույն մեծ մկան կորիվ ու մկան հետունեն իրենց յեղայրների հանդեպ։

Ավելի հարմարվածների այդ ապրելը և թույլերի վոչնչացումը Դարվինը անվանել ե բնական ընտրություն։

հավերի վայրի ցեղերից՝ Դարվինը և նրա հետեւրդները ապացուցել են, վոր տնային աղավնիների բոլոր ցեղերը առաջացել են միևնույն վայրի աղավնուց (սիգարից), հավերի բոլոր բազմաթիվ ցեղերը — հավերի միակ վայրի ցեղից, վորը ապրում եր Հնդկաստանում, շների բոլոր ցեղերը առաջացել են շների և չաղկալների մի քանի տեսակներից:

Յեթե մեր աչքի առաջ կարողացել են առաջանալ ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի հարյուրավոր ցեղեր ու տեսակներ, այդ դեպքում գարմանալի չե, վոր այն հարյուրավոր միլիոն տարիներում, վորոնց ընթացքում գոյութուն ունի կյանքը յերկրի յերեսին, կարող ելին յերեան գալ բույսերի և կենդանիների հարյուր հազարավոր և միլիոնավոր տեսակներ:


ԴԱՐՎԻՆԻ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԸ

Մենք ավելի և ավելի յենք համոզվում, վոր վոչ թե աստվածաշունչը, այլ Դարվինի ուսմունքն է տալիս մեզ կենդանիների և բույսերի ծագման բոլոր հարցերի ճիշտ բացատրությունը, ինչպես



ՀԱԼՔԵԼ

Դարվինի զինակիցները:



Կ. Ա. Տէմերլազեկ

և այն հարցի, թե ինչու յեն կենդանիները այդպես լավ հարմարված կյանքի պայմաններին:

Աստվածաշնչի ուսմունքը՝ հիմնվում է դեպի հարաշը ունեցած հավատի վրա, այն ինչ Դարվինի

ուսմունքը հիմնվում է կենդանական և բուսական աշխարհի մասին յեղած բոլոր գիտելիքների վրա, նրանց կազմվածքի և յերկրի վրա յեղած կյանքի պատմության վրա:

Բացի Դարվինից, եվոլյուցիոն ուսմունքի ամրացման համար ահազին նշանակություն են ունեցել անցյալ դարի շատ ուրիշ մեծ գիտնականներ ևս: Թվենք նրանցից մի քանիսին:

Անգլիայի գիտնական Լյայելը (1797—1875), վոր յերկրի պատմության գիտության հիմքն ե դրել:

Ուոլեսը (ծն. 1823 թ.), Դարվինի բարեկամը, վորը նրա հետ միաժամանակ, բայց նրանից անկախ, հասել է կենդանիների բնական ծագման ուսմունքին և հատկապես շատ գործ ե կատարել նրանց տարածման ուսումնասիրության գործում:

Գերմանիայի գիտնական Հեկլելը (1834—1918), վորը շատ և ոժանդակել Դարվինի ուսմունքը Գերմանիայում և այլ յերկրներում տարածելուն և արմատացնելուն:

Կ. Տ. Տիմիրյազեկը (1843—1920), ուսու այդ մեծ բուսաբանը, վորը Դարվինի ուսմունքի առաջին և ամենալավ տարածողն եր մեր յերկրում:

Ի՞նչ են ԱՍՈՒՄ ՅԵՐԿՐԻ ՇԵՐՏԵՐԸ

Դարվինի ուսմունքի շնորհիվ հասկանալի յեն դարձել բրածո կենդանիների և բույսերի բոլոր գյուտերը, ինչպես նաև պարզվել ե այն կապը, վորը կա բրածո կենդանիների և ներկայումս ապրող կենդանիների միջև:

Դեռ ևս Լյայելն է ապացուցել, վոր յերկրագնդի յերեսը շատ անգամ և փոփոխվել, վոր այն տեղերը, վորոնք առաջ ծածկված են յեղել ծովով, այժմ դարձել են ցամաք, և ընդհակառակը՝ շատ ցամաքամասեր այժմ ծածկված են ծովով: Ծովի հատակում կուտակվում են տիղմ և ավազ և թաղում են իրենց տակը կենդանիների զիակները: Ծովերը ցամաքում են, նրանց հատակը բարձրանում ե և հազարավոր ու միլիոնավոր տարիներից հետո այդ զիակների թացորդները հասնում են մեզ:

Նա, ով յեղել է ձոլի թեք ափին կամ լեռան լանջի վրա, տեսել է հողի ամուր կամ կակուղ իրար հաջորդող շերտերը այն ձևով, ինչպես այդ ցույց է տրված մեր նկարում: (Նկ. 62):

Միանգամայն պարզ է, վոր վորքան ավելի ցած և գտնվում էողի շերտը, այնքան ին և նրա ծագումը:

Այսպիսով ուսումնասիրելով զանազան շերտերում, այսինքն՝ տարբեր խորության գտնված բրածո



Նկ. 62. Հողի իրար հաջորդող շերտերը:

կենդանիներին մենք տեսնում ենք կյանքի պատկերը յերկրի յերեսին, սկսած ամենահին ժամանակներից մինչև մեր որերը:

ՅԵՐԿՐԻ ՀԱՍԱՎԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎՈՒՄ Ե ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ՄԻԼԵՈՆ ՏԱՐԻՆԵՐՈՎ: ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԵՆԴԱՆՆԵՐԸ ԱՆԸՆԴՀԱՏ ՀԱԶՈՐԴԵԼ ԵՆ ԻՐԱՐ


Ուսումնասիրելով հողի շերտերը, կարելի յե մոտավորապես վորոշել յերկրի հասակը: Գիտնականների հաշվությունը են տվել, վոր այդ շերտերը գոյացել են միլիոնավոր տարիների ընթացքում: Գիտնականների հաշվով՝ յերկրի տարիքը հասնում է մոտավորապես 500 միլիոն (500.000.000) տարվա:

Իսկ աստվածաշնչի ասելով աշխարհի ստեղծագործությունից անցել ե մոտ 7000 տարի: Այդ հարցում ևս զիտության փաստերը սաստիկ հակասում են աստվածաշնչի անհիմ պնդումներին:


Հարմարության համար զիտնականները յերկրի ամբողջ պատմությունը բաժանել են մի քանի խոշոր մասերի, վորոնք կոչվում են դարաշրջաններ (եպոխաներ կամ երաներ): Յերկրը և նրա պատմությունը այժմ այնքան լավ են ուսումնասիրված, վոր յերկրը կարծես մի զիրք լինի, վորի եջերն ու գլուխները շրջում են ու կարդում: Յերկրի կյանքի մասին այդ զիրքը — զիտությունն եւ կարդալ այդ զիրքը — դա նշանակում է ուսումնասիրել յերկրի զանազան շերտերում գտնված բրածո կենդանիների և բույսերի մացորները:



Բակտերիաները խոշորացրած են այսուղ մոտ 1000 անգամ:



Ամյուր:



Արմատուն կենդանիներ կրի խեցիներով:
Նկ. 63. Ներկայումս ապրող ամենապարզ որգանիզմները:

Յերկրի շերտերը ուսումնասիրելիս ամենից առաջ աչքի յե ընկնում այն, վոր տարբեր շերտերում պատահում են վոչ թե միևնույն,

այլ տարբեր բրածոներ։ Դա նշանակում է, վոր տեղի յեն ունեցել կենդանիների և բույսերի անըդհատ հաջորդումներ, ուրիշ խոսքով՝ նրանք շարունակ փոփոխվել են։ Պարզ է ուրեմն, վոր միանգամայն սխալ ե աստվածաշնչի պնդումը, թե աստված բոլոր կենդանի եակներին ստեղծել ե միանգամ ընդմիշտ։

Մեր հետագա նկարներում մենք ցույց կտանք զանազան շերտերում ապրող կենդանիներին և բույսերը, դրանով մենք կտեսնանք նաև նրանց իրար հաջորդելը, սկսած առաջին կենդանի եակներից մինչև ամենավերջին բրածո կենդանիները։

Յերկրի հնագույն, ամենախոր շերտերի մեջ բոլորովին չկան կենդանիների մնացորդներ։ Սակայն կառակած չկա, վոր այդ ժամանակ արդեն հայտնվել եյին առաջին կենդանի եակները։ Բայց զրանք փափկամարմին եակներ են յեղել և նրանց մարմինը կմախք^{*} չի ունեցել, այդ պատճառով ել նրանցից չեր կարող վորեե հետք մնալ, վորովիետև փափուկ մարմինները փթում են հողի մեջ առանց հետք թողնելու։

Պահպանվել հողի մեջ մինչև մեր որերը կարող եյին միայն այն կենդանիները, վորոնք ունեն արտաքին զրահ կամ խեցի, ինչպես որինակ, խխունջները, խեցգետինները և այլն, կամ ներքին կմախք, ինչպես վորնաշարավոր կենդանիները։

Բայց կմախքներն ել ի վերջո քայլայվում են և միայն առանձին դեպքերում պահպանվում են վոսկրուտին, կենդանիների զրոշմը և նախկին կյանքի այլ հետքերը։ Ահա թե ինչու այդքան դժվար ե դիտության համար կենդանիների ծագումը վորոշելու աշխատանքը։

Այժմ ել յերկրի յերեսին ապրում են բազմաթիվ մանրագույն եակներ (այնքան մանր, վոր նրանց կարելի յե տեսնել միայն խոչըրացույց դործիքի — միկրոսկոպի — միջոցով), վորոնք նույնական կմախք չունեն և նման են այն կենդանիներին, վորոնք ապրել են միլիոնավոր տարիներ սրանից առաջ։ 43 եջի նկարների վրա ցույց են տրված ներկայումս ապրող ամենապարզ եակները։

ԱԿԶԲՈՒՄ ՀԱՅՏՆՎՈՒՄ ԵՆ ԶՐՈՒՄ ԱՊՐՈՂ, ՊԱՐԶ ԿԱԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՈՂՆԱՇԱՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Միմիայն ավելի ուշ գոյացած շերտերում ենք գտնում առաջն բրածոները։ Դրանք այն կենդանիների մնացորդներն են, վո-

* Կմախք կոչվում ե կենդանիների վոսկրուտին կամ նրանց մարմնի այլ կոշտ մասերը։

քոնք ունեցել են խեցիներ կամ ամուր կազմվածք, վորոնց շնորհիվ նրանք պահպանվել են։ Մանրամասն ուսումնասիրելով խեցերը և այլ մնացորդները, զիտնականները զտել են, վոր զբանք բացառապես ծովային և անողնաշար^{*} կենդանիներ են յեղել։ Այս նկարի վրա մենք տեսնում ենք արդեն կենդանիների մեծ բազմագանություն, վորոնք հիշեցնում են այն կենդանիներին, վոր կոչվում յեն ասեղնակաշի, խեցգետնանման և այլն։ Նրանցից մի քանիսը ամրացած են անշարք կերպով ծովի հատակին, մյուսները շարժվում են ջրի մեջ։



Նկ. 64. Հնագույն ժամանակի (քեմբրիական շրջանի) կյանքից մի պատկեր։


Սրանից պարզ է, վոր առաջին անգամ կենդանիները հայտնվել են ջրի մեջ և դա լիովին հասկանալի յե, վորովին ետև կյանքի պայմանները ջրի մեջ ավելի թեթև են, քան ցամաքի վրա։ Ահա թե ինչու ներկայումս ապլոդ ամենապարզ կենդանիները ևս մեծ մասամբ ապրում են ջրի մեջ։

ԱՌԱՋԻՆ ՎՈՐՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ (ԶԿՆԵՐԸ) ՀԱՅՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՆՈՂՆԱՇԱՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Հնագույն դարաշրջանի ավելի ուշ գոյացած շերտերում մենք գտնում ենք ջրի մեջ հայտնված առաջին ձկների հետքը (դրոշմը)։

* Անողնաշար կոչվում են այն կենդանիները, վորոնց մարմնի մեջ վոսկրուներ չկան։

Այդ անճոռնի ձկների մարմինը պատած է զրահով, նրանց քիմուխտները ավելի շատ նման են ունելիքի, բայց նրանք արդեն ունեն ներքին վոսկերոտի (թեև տարբեր այժմյան ձկների վոսկերոտուց), — ահա թե ինչու մենք կարող ենք ասել, վոր դրանք առաջին վող-



Նկ. 65. Առաջին վողնաշարավոր կենդանիների ներկայացուցիչները — զրահապատ ձկներ:

նաշարավոր կենդանիներն են: Այդ առաջին ձկները յերեացել են, գիտական տվյալների համաձայն, մոտավորապես 200.000.000 տարի սրանից առաջ:

ՔԱՐԱԾԻԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿՆ Ե, ՅԵՐՔ ՀԱՅՏՎԵՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԶՈՐՔՈՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՍՏԱԲՈՒՆ ԲՈՒՅՍԵՐԸ

Յերկրի հետեւալ, ավելի յերիտասարդ շերտերում գիտնականները դունում են բազմաթիվ այլազան ծովային անողնաշար կենդանիներ: Միաժամանակ արդեն յերևան են գալիս նաև թռչող միջատներ և հողի յերեսին ապրող վողնաշարավոր կենդանիներ: Մեր նկարում ցույց ե արված մի պատկեր այդ ժամանակվա կյանքից: Յերկրի յերեսին

ապրող այդ կենդանիները հիշեցնում են, թեև աղոտ կերպով, այժմյա յերկկենցաղ* կենդանիներին — սալամանդրին կամ տրիտոնին: 66-րդ նկարում մենք տեսնում ենք և նախնական անտառները, վորոնց ծառերը հիշեցնում են մեր փիլիկները, այլ և հակայական մի միջատ, վոր նման ե մեր այժմյան ծղրիդին:



Նկ. 66. Մի պատկեր քարածխային շրջանի կյանքից:

Կյանքի այդ շրջանը յերկրի յերեսին ստացել ե «քարածխային շրջան» անունը այն պատճառով, վոր մեր քարածուխի հանքերը վոչ այլ ինչ են, քան այդ ժամանակվա թաղված նախնական անտառները:

ԲՐԱԾՈ ԲՐԱՆԽԻՈԶԱՎՐԵՐԸ ԲՈԼՈՐ ԶՈՐՔՈՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԱԽԱՅԱՅՅԵՐՆ ԵՆ

Նույն քարածխային շրջանում ապրում եին բրանխիոզավր կոչված կենդանիները, վորոնք ցույց են տրված 67-րդ նկարի վրա: Այդ կենդանիները իրենց կառուցվածքով նման են ձկների, բայց շատ կողմերով նման են նաև ներկայումս ապրող յերկկենցաղներին: Ապացուցված ե, վոր հենց այդպիսի կենդանիներն են յերկ-

* Յերկկենցաղ են համարվում այն կենդանիները, վորոնք իրենց կրանքի մի մասը անց են կացնում ջրի մեջ, իսկ մյուս մասը՝ ցամաքի վրա, ինչպես որինակ, դողոնները, գորտերը, արիտոնները և այլն.

կենցաղների հիմքը դրելու հայց նույն այդ բրածո կենդանիների մեջ գտնվել են և այնպիսիները, վորոնք շատ են նման սողուններին։ Այսպիսով մենք հիմք ունենք յենթադրելու, վորքարածխային շրջանի այդ առաջին չորքուանիները նախահայրեն են հանդիսանում թե՛ մեր յերկակենցաղների (գորտեր, տրիտոններ), և թե՛ մեր սողունների (մողեսներ, կոկորդիլոսներ, ոձեր)։



Նկ. 67. Բրանխոզավորեր — յերկրի յերեսին ապօռող վողնաշարավոր կենդանիների բրածո նախահայրերը։

Այդ բրածո կենդանիների գյուտը խիստ կարեոր ե գիտության համար, վորովհետեւ դա ապացույց ե, վորբուր չորքուանի կենդանիները առաջացել են ձկնաման նախորդներից։

ՀԱԿԱՑԱԿԱՆ ՄՈՂԵՍՆԵՐԻ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՄՈՂՈՒՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Հետագա պեղումները ցույց են տալիս, վոր հաջորդ շերտերում յերեսում են ավելի և ավելի մեծ քանակությամբ հողի յերեսին ապրող վողնաշարավոր կենդանիներ, մեծ մասամբ՝ սողուններ։ Այդ շրջանը կարելի յե անվանել սողունների տիրապետության շրջան։ Զրի մեջ՝ բացի իսկական ձկներից, ապրում եյին «ձուկ-մողեսներ», վորոնք նման եյին ձկների, բայց շնչում եյին դրսի ող. սողունները սկսում են ապրել և ջրի մեջ, և ցամաքի վրա, և տիրել նաև ողին։ Անտառներում այդ ժամանակ հայտնվում են ահազին քանակությամբ մողեսներ, վորոնցից վորմանք ման են զալիս չորս վորով,

մյուսները ցատկում են յետելի վոտներով, ուրիշները թուչում են ծառից-ծառ։ Անտառը բաղկացած ե վոչ միայն փիլիկներից, այլ արդեն յերեսն են գալիս վշատերն ծառեր, նման մեր սոճուն կամ յեղենուն, հայտնվում են ուղղաձիգ արմավենիները (սագո), նման տաք յերկրների այժմյան արմավենիներին։



Նկ. 68. Սողունների ծաղկուն շրջանը։

Այս նկարի վրա տրված ե մի պատկեր այդ շրջանի կյանքից։

ԱՆՀԱՅՏԱՑԱՄ ՀՐԵՇՆԵՐ


Անհայտացած հըեշներից շատերը ահազին չափերի եյին հասնում։ Այս նկարի վրա ցույց ե տրված մի զիշատիչ սողուն, վորի յերկարությունը հասնում եր ավելի քան 11 սաժենի։ Նրա կմախքը գտնված ե Հյուսիսային Ամերիկայում, Վյոմինգ շտատում և այժմ գաղապանվում ե ամերիկական թանգարանում։ Նրա մարմինը ամենամեծ փղի մարմնից ել մեծ եր, իսկ բարձրությունը մեջքից մինչև զետին հասնում եր յերկու սաժենի (4 մետր)։ Այդչափ մեծության հանդեպ աշքի յե ընկնում նրա փոքրիկ զլուխը։ (Նկ. 69)։

70-րդ նկարը պատկերացնում ե ահազին անհայտացած խոտածարակ մի կենդանու, վորի կմախքի նկարը մենք արդեն տվել ենք։

Այստեղ ցույց են տրված յերկու անհայտացած հրեշներ և մեկը՝ ահազին զանգով (յերկու մետր), իսկ վոտները ոնցյեղջուրի վոտներից շատ ավելի մեծ եյին (Նկ. 71)։ Յերկրորդը՝ խոտածարակ սողուն ե, մոտ չորս սաժեն (8 մետր) յերկարությամբ։ (Նկ. 72)։

ԹԻՉՈՂ ՄՈՂԵՍՆԵՐ

Նույն այդ շրջանում յերեան են գալիս թոչաթաղանթունեցող սողուններ. այդ թաղանթի մեկ ծայրը ամրացած է առջևի թաթերի ճկույտին, իսկ մյուս ծայրը — ամբողջ մարմնի կողքերին, Յերկար պոչերով և ատամներով ոժուված այդ առաջին թոչունները ցույց են տրված մեր նկարի վրա. (Նկ. 73):



Նկ. 69. Դիպլոդոկ — զիշատիչ սողուն:

Նրանց վոսկրուտը դեռ ևս չունի այն թեթևությունը, վոր մենք տեսնում ենք ներկայումս ապրող թոչունների վոսկրուտի մեջ, իսկ ամուր ատամները՝ բերանի մեջ միայն ավելացնում են նրանց ծան-

րությունը. Փետուրների վոխարեն նըրանք ունեն կաշվենման թաղանթ առջեկի և յետերի վոտների միջև. Պոչը յերկար ե և նույնպես խանգարում ե թոփչքին:

Այդ պատճառով այդ թոչող մողեսները քիչ եյին հարմարված ողում ապելու համար, ուստի և անհետացան: Նրանց վոխարինեցին իսկական թոչունները, վորոնք առաջացան նույնպես սողուններից: Մինչդեռ մողեսները թոչում եյին վոտքերի միջև ճպված կաշվեթաղանթի շնորհիվ, այլ սողունների վրա յերեան են գալիս փետուրներ: Այդ սողունները կոչվել են նախաթոչուններ:




Նկ. 70. Բրոնտոզավը — անհայտացած խոտակեր ահազին սողուն:

Բրոնտոզավը — անհայտացած խոտակեր ահազին սողուն: Այդ բելու համար, ուստի և անհետացան: Նրանց վոխարինեցին իսկական թոչունները, վորոնք առաջացան նույնպես սողուններից: Մինչդեռ մողեսները թոչում եյին վոտքերի միջև ճպված կաշվեթաղանթի շնորհիվ, այլ սողունների վրա յերեան են գալիս փետուրներ: Այդ սողունները կոչվել են նախաթոչուններ:

ԹՈՉՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԱՑԵԼ ԵՆ ՍՈՂՈՒՆՆԵՐԻՑ

Թոչունների և սողունների միջև շատ նմանություն կա, վոր աչքի յեր ընկնում մանավանդ այն դեպքում, յերբ համեմատում ենք նրանց նախաթոչունների հետ: Նախաթոչուններ անվանում




Նկ. 71. Յեղջյուրավոր սողուն — տրիցերատոպս:



Նկ. 72. Խոտակեր սողուն — իգուանոզոն:

են այն սողուններին, վորոնց մարմնի վրա յերեացել են թևեր: Այդ նմանությունը արդեն իսկ բավական կլիներ յենթագրելու համար,

Վոր թռչունները առաջացել են սողուններից, բայց գիտությունը փնտրում է ճշգրիտ տվյալներ:




Նկ. 73. Անհայտացած թռչող մողեսներ — պտերոդակտիլներ:

1861 թվին Գերմանիայում հայտնված գյուտը ողնեց հասկանալու, թե ինչպես ե ընթացել թռչնի զարգացումը: Այստեղ գտել են այդ կենդանիների յերկու դրոշմերը: Նրանք ունեյին յերկար պոչեր, ինչպես սողուններին ե, բայց միաժամանակ նրանք ունեյին թռչնի կտուցատամերով, առաջին վոտների և պոչի վրա կային յերկու կողմից ել զույգ՝ զույգ փետուրներ (Նկ. 74): Ինարկե, այդ տեսակ կենդանին չեր կարող կենսունակ լինել. նա և՛ վատ եր թռչում, և՛ վատ եր ման զալիս: Նա պետք

Նկ. 74. Նախաթռչնի հետքը Դա մի կենդանի յէ, վորը նման ե ներկայումս գոյություն ունեցող թռչունների նախնիքներին: Նախաթռչունները ապրել են մեղանից մոտ 120,000,000 տարի առաջ:


ե վոչնչանար և իր տեղը զիջեր իսկական թռչուններին: Նախնական թռչունների այդ գյուտը կարեռ ե գիտության համար, վորովհետեւ նա ցույց ե տալիս, վոր թռչունները առաջացել են սողուններից:



Նկ. 75. Այս նկարի վրա ներքեւում նկարված ե նախաթռչունը այն տեսակ, ինչպես վոր պտերոդակտիլներ են նրան գիտնականները՝ գտած հետքի համաձայն: Ողում թռչող կենդանին թռչող մողես եւ:

ԻՍԿԱԿԱՆ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՅԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ

Ոսումնամիելով կենդանիների բրածո մնացորդները, գիտնականները իմանում են վոչ միայն նրանց ծագումը, այլ և հասկանում



Նկ. 76. Թռչուններ, վորոնք ապրել են մոտ 100,000,000 տարի սրանից առաջ, Դրանք ներկայումս գոյություն ունեցող թռչունների նախնիքներն են:

Են, թե ինչպես ե ընթացել զանազան կենդանիների զարգացումը: Թռչունների բրածո մնացորդները ցույց են տալիս, թե ինչպես ե կատարվել սողունների թռչուն դառնալը:

Այն սողունները, վորոնցից ծագել են թռչունները, սկսել են փոխվել, նրանց պոչը կարճացել ե, մարմի այն վերջավորությունների փոխարեն, վորոնք սկզբում ունեցին ճանկեր, յերևացել են թեր, ինչպես այժմյա թռչուններինն ե, կրծքի վրա յերևացել ե կրծքի վոսկը՝ մկանները ամրացնելու համար:

76-րդ նկարի վրա ցույց են տրված այն թռչունների կմախքները, վորոնք ալրել են այսպես կոչված կավճային շրջանում:

Նրանց կրծքի վրա կան վողներ, թեև դրանք այնքան զարգացած չեն, վորքան ներկայումս ապրող թռչունների վողներն են, առջևի վոտները դարձել են թեր, պոչը արդեն կարճացած ե և համարյանման ե իսկական թռչունների պոչին, բայց կտցի մեջ տակավին պահպանված են ատամները: Այդ ատամները ապացույց են այն կապի, վորը կա այդ թռչունների և սողունների միջև: Կավճային շրջանի թռչուններից արդեն այնքան ել հեռու չեն այժմյան թռչունները:

ԿԱԹՆԱՍՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԱՌԱՋԱՑԵԼ ԵՆ ՍՈՂՈՒՆՆԵՐԻՑ

Սողունների թվում մենք գտնում ենք և այնպիսիններին, վորոնցից առաջացել են կաթնասունները: Նկարի վրա (77) ցույց



Նկ. 77. Այն սողունները (պարեյոզավըներ), վորոնցից առաջացել են այժմյան գաղանները:

* Կաթնասուն կոչվում են այն կենդանինները, վորոնք կաթով են կերպառում իրենց ձագերին:

են տրված այդ սողունները: Թեև ըստ արտաքին տեսքի դժվար է համեմատել նրանց կաթնասունների հետ, բայց ավելի մանրամասն ուսումնասիրությունից հետո գտել են, վոր նրանց ատամները նման են ներկայումս ապրող գաղանների ատամներին: Բացի այդ, վոսկերոտու կառուցվածքով, այլ և նրանով, թե ինչպես ե նրանց պարանոցը ամրացված զլվին և մի շարք այլ մանրամասնությունների շնորհիվ կարելի յե այդ սողուններին համարել այժմյան գաղանների կամ կաթնասունների նախահայրեր:

Առաջին կաթնասունները հայտնվել են մոտ 160.000.000 տարի սրանից առաջ, այսինքն դեռևս թռչուններից առաջ, բայց նրանք բազմացել և տիրապետող են հանդիսացել շատ ավելի ուշ: Կաթնասունների թվին են պատկանում մեզ հայտնի չորթոտանի գաղանները — կատունները, գայլերը, ձիյերը, կապեկները, այլ և մարդու:

ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԵԶ ՆԱՅԵՎ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԱՊՐՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄՈՏԱՎՈՐ ԱԶԳԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ


Գիտնականների պեղումները հողի ավելի և յերիտասարդ շերտերում, այսինքն այնպիսի շերտերում, վորոնք ավելի մոտ են յեր-



Նկ. 78. Հոկայական յեղջերու — այժմյան յեղջերուների ազգակիցը:

կը մակերեսույթին, տալիս են մեզ մեծ քանակությամբ մամոնտների, ոնդյեղջուրների, իսկական յեղջերուների մնացորդներ:

Այդ կենդանիները մոտավոր ազգակիցներ են հանդիսանում այժմյան փղերի, ոնդյեղջուրների, յեղջերուների, Պարզ ե, վոր յերկրի ավելի ջահել շերտերում մենք գտնում ենք ավելի ու ավելի մեծ քանակությամբ ժամանակակից կենդանիների ազգակիցներին:



Նկ. 79. Մամոնտ, փղերի մոտիկ աղդակեցը, վորը անհայտացել է մարդկանց աչքի առաջ:

**ՄԻ ՔԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՍԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԵՆ
ԿԱՐՈՂԱՑԵԼ Ե ՎՈՐՈՇԵԼ ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՈԼՈՐ ԳԼԽԱՎՈՐ
ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ**

Գիտությունը գտել ե ներկայումս ապրող յերկկենցաղների, թռչունների և գաղանների հեռավոր նախորդներին, բայց ամեն դեպումն ել չի հաջողվել գտնել դրանց բոլոր նախորդներին:

Սակայն ձիու և մի քանի այլ կենդանիների վերաբերմամբ գիտությանը հաջողվել ե մեծ ճշտությամբ պարզել նրանց զարգացման բոլոր աստիճանները:


Պեղումների շնորհիվ գիտնականներն այժմ գիտեն ժամանակակից ձիու բոլոր նախորդներին և կարելի յե պարզել, թե ինչպես ձին իր հնդամատնյա նախորդից դարձել ե միմատնյա, վորը ծածկված ե կճղակով (սմբակով): 80-րդ նկարի վրա մենք ցույց ենք տալիս աղվեսի մեծությամբ մի կենդանու, վորի առջևի վոտները ունեցել են չորս-չորս մատներ, իսկ յետեկի վոտները՝ յերեքական մատներ: Սա մեկն ե ձիու վաղեմի նախորդներից, կճղակավոր (սմբակավոր) կենդանիների ավելի հին նախորդը ունեցել ե հնդական մատ յերկու վոտների վրա:

Ձիու ավելի հետագա նախորդների վերաբերմամբ մենք տեսնում ենք, վոր նրանց առջևի վոտի թերած մատները փոքրացած են և միաժամանակ խիստ հաստացած միջին մատները: Յեզ վերջապես, ձիու ավելի ևս ուշ նախորդները թեև ունեն յերեքական մատ վոտների վրա, բայց կողքի յերկու մատները թերած են և, հավասար, չեն գործածվել:



Նկ. 80. Ձիու հնագույն նախորդը: Նրա առջևի վոտները ունեցել են չորս-չորս մատ, իսկ յետեկի վոտները՝ յերեքական:


81 և 82 նկարների վրա ցույց են տրված ձիու բոլոր բրածո նախահայրերի վոտները: Արդեն չորսմատնյա հնագույն նախորդի (նկ. 81) յետեկի վոտի առաջին և հինգերորդ մատը անհայտացած են, իսկ առջևի վոտի առաջին մատից պահպանվել են հաղիվ նշմարելի վոսկը կեներ:



Նկ. 81.

Ներկայումս ապրող ձիու միայն մի մատն ե լավ զարգացած, իսկ կողքի մատները պահպանվել են կաշվի տակ, վորպես վոսկը կեներ:

Այսպիսով գիտությանը հաջողվել ե գտնել ձիու զարգացման ամբողջ ուղին նախորդներից մինչև մեր օրեւը:



Նկ. 82. Զիու բրածո նախորդների վոտոները: Յերեսում ե, թե ինչպես և կառարվել մատների թղի պահուելը և դրա հետ միասին միջին մատի հաստանալը: (Տես նաև 81-րդ նկ.)

ՄԻ ՔԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԱՆՀԱՅՏԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԱՉՔԻ ԱՌԱՋ

Մեզ համար այժմ պարզ ե, վոր կրոնի և գիտության վեճի մեջ հաղթությունը տարել ե գիտությունը: Յեվ զիսության բախտից, իսկ կրոնի դժբախտությունից, այժմ ել դեռևս պահպանվել են մի



Նկ. 83. Բաղակտուց, ապրում ե Ավստրալիայում: Նկ. 84. Իժ, ապրում ե Նոր Գվինեյայում: քանի կենդանիներ, վորոնք մի տեսակ կենդանի բրածոներ են և ցույց են տալիս այն ճանապարհները, վորով անցել ե կենդանիների մեջից մյուսին փոխվելու զարգացումը:

Ավստրալիայում վորոշ պատճառներով, վորոնց մասին մենք խոսել ենք վերը, պարկավոր կենդանիների, որինակ, կենդուրուի



հետ միասին, պահպանվել են և ուրիշ կենդանիներ, վորոնք կոչվում են միասրբան կենդանիներ: Դրանց թվին ե պատկանում բաղակտուցը, վորը ցույց ե տրված 83-րդ նկարի վրա և իժը (նկ. 84): Բաղակտուցը կիսաջրային կենդանի յե, ինչպես գետում ապրող սամույրը կամ կուղը, իր համար սնունդ ե ճարում ջրի մեջ, լավ լողում ե, ծածկված ե մորթով և նման ե գաղանի: Բայց նրա ներքին կազմը ցույց ե տալիս, վոր նա մոտ ե սողուններին: Սողունների նման, նրանք ել ձու յեն ածում, բայց իրենց ձագերին կերակրում են կաթով:

Այդ կենդանիները, վոր միաժամանակ նման են և սողունների և թռչունների, չքանում են մեր աչքի առաջ: Նրանք ավելի վատ են հարմարված կյանքին, քան այժմյան ողղունները և կաթնասունները, այդ պատճառով ել թե բաղակտուցը և թե իժը հալածվում են նրանցից: Այդ կենդանիները, վորոնցից արդեն շատ քիչ են մնացել, չափաղանց հետաքրքրական են մեզ համար, վորով հետեւ դրանք կենդանի ապացույցներ են այն բանի, թե ինչպես և ընթացել սողունների զարգացումը և նրանց կաթնասուններ դառնալը:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼ Ե ՀԱՉՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄԵջ

Ինչպես արդեն գիտենք, կենդանիները միանդամից չեն առաջացել, այլ հաջորդաբար:

Վարի աղյուսակում նշանակված են այն դարաշրջանները, վորոնց մասին մենք արդեն խոսել ենք: Այդ դարաշրջանները բաժանված են ավելի մանր ժամանակամիջոցների: Յուրաքանչյուր շրջանի դիմացի մեջ սյունյակը ցույց ե տալիս կենդանիների առաջացման ժամանակը: Այդ սյունյակի լայնանալը կամ նեղանալը ցույց են տալիս այդ կենդանիների ծաղկելը կամ թուլանալը: Այդ նկարից յերեսում ե, վոր անողնաշար կենդանիները հայտնվում են հնագույն շերտերում և ապրում են մինչև հիմա. ավելի ուշ են հայտնվում ձկները. յերկանցաղները առաջ են գալիս ավելի ուշ, սկզբում տիրապետում են, իսկ այնուհետեւ սկսում են նվազել, իսկ սողունները հայտնվում են յերկանցաղներից հետո. մեր ժամանակում նրանք ել սկսում են նվազել: Միայն սողունների առաջ գալուց հետո յեն հայտնվում թռչունները և կաթնասունները: Ամենից վերջը

հայտնվում ե մարդը, ուրիշ խսքով, մարդը ամենաշահանդանին է:

Տերկաբանական	Առանձ (Հաջաններ)	Առարկա	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Տերկաբանական
Առարկա	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն
Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն
Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն
Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն	Առաջապահություն

Աղուսակը ցույց է տալիս կենդանիների առաջացման աստիճանականությունը:

ԳԻՏՈՒՅՑՈՒՆԸ ՊԱՐՁՈՒՄ Ե ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՄԲՈՂՋ ՈՒՂԻՆ՝ ՊԱՐՁ ԿԱԶՄՎԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐԴԸ

Մենք բերինք բազմաթիվ ապացույցներ, վորոնք հաստատում են կենդանիների զարգացումը և հերքում են աստվածաշնչի ուսմունքը:

Այդ ապացույցների հիման վրա գիտնականները պարզում են, թե ինչպես են զարգացել այդ բոլոր կենդանիները, ինչ ճանապարհներով մի կենդանուց առաջացել ե մի ուրիշ կենդանի: Այս նկարի վրա ցույց է տրված կենդանիների զարգացման այն հնարավոր ճանապարհը, վորը պատկերացնում է իրեն ժամանակակից գիտությունը:

Կենդանիների զարգացումը գիտությունը պատկերացնում է վորպես մի ծառ, վորի արմատը — կյանքի ընդհանուր արմատն ե: Նրա հիմքում գտնվում են շատ պարզ կազմ ունեցող կենդանիները (վորոնք նման են ամյուբախն և այլ մանրագույն կենդանիներին): Կյանքի զլսավոր բնից տարածվում են կողքի ճյուղերը, դրանք այն կենդանիներն են, վորոնք փոփոխվում են դանազան ուղղությամբ:

Գլխավոր ճյուղը տանում ե դեպի ամենապարզ կազմվածք ունեցող անողնաշար կենդանիները, ինչպես մեղուզան, մարջանը (այսպես կոչված դատարկ-աղիքավոր կենդանիները) և վորդերը, իսկ դատարկ-աղիքավորներից և վորդերից արդեն առաջանում ե մի ճյուղ, վորը տանում ե ավելի բարդ անողնաշարավորները, ինչպես խխունջը, խեցգետնանմանները, խեցգետինները, սարդերը և միջատները: Դատարկ-աղիքավորներից և վորդերից այլ կողմ ե ընկնում մի ճյուղ, վորը տանում ե դեպի վողնաշարավոր կենդանիները, վորոնք այժմ տիրապետում են: Ներկայում ապրող չորքոտանիները, սողունները, յերկենցաղները, ձկները և մնացած բոլոր կենդանիները — դրանք բոլորը «ծառի» կողքի ճյուղեր են և իրենց սկիզբը առնում են անհայտացած կենդանիներից: Այդ «ծառի» ամենաշահել ճյուղն են կազմում կապիկները և մարդը:

Այսպես ե բացատրում կենդանիների ծագումը գիտությունը, վորը իր յեզրակացություններն անում ե յերկագնդի պատմությունը և կենդանիների կազմվածքը ճշտորեն ուսումնասիրելու հիման վրա և վոչ թե հիմնվելով դեպի «հրաշքն ու արարչագործությունը» ունեցած հավատի վրա:

աստծուն, զգուշանում եյին հրապարակով խոստովանելու այդ, վորպեսզի Շնամիներ չվաստակեն և չենթարկվեն հալածանքների, վորովհետեւ դա կխանգարեր նրանց պարապելու իրենց սիրած գիտությամբ:

Մի շաբթ գիտնականներ գերադասում եյին լոել, վորպեսզի թշնամիներ չվաստակեն և չենթարկվեն հալածանքների, վորովհետեւ դա կխանգարեր նրանց պարապելու իրենց սիրած գիտությամբ:

Իսկ մենք զործ չունենք նրա հետ, թե ինչով են առաջնորդում այս կամ այն գիտնականները. մեզ համար կարենու ե իմանալ, թե գիտնականները ինչ են կարողացել ապացուցել և ինչ չեն կարողացել հաստատել: Այդ կողմից ամեն մարդ, ով ընդունակ է խորհելու, պարտավոր ե ինքը վճռել, թե արդյոք, կարող է հավատն առ աստված և աստվածաշունչը հաշտվել այն փաստերի հետ, վոր բերված են զրքույկիս մեջ:

Այս զրքույկի մեջ մենք ծանոթացանք այն գլխավոր ապացույցներին, վորոնցով հերքվում են աստվածաշունչն ու կրոնը, բայց, ինարկե, մի փոքրիկ զրքույկի մեջ անկարելի յե բերել այն բոլոր ապացույցները, վորոնցով գիտությունը հիմնավորում է կենդանիների բնական ծագումը: Այսպես, որինակ, մենք այս զրքում զըլխավորապես խոսում ենք կենդանիների ծագման մասին: Բայց բոլորովին պարզ ե, վոր այն բոլորը, ինչ վոր ասված ե այսաւեղ, ամբողջովին ճիշտ ե նաև մարդու և բույսերի ծագման վերաբերմամբ: Այդ բոլորը մենք չկարողացանք մանրամասնորեն պատմել տեղի սղության պատճառով:

Ովքեր ցանկանում են մանրամասնորեն ծանոթանալ այն հարցին, թե ինչպես և վորտեղից են առաջացել մարդը, ուրիշ կենդանիներն ու բույսերը, պետք ե կարդան այլ զրքեր ես, վորոնց մեջ հարցը ավելի լրիվ ե պարզաբանված:

Շատ հավատացյալների համար առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն հարցը, թե ինչու մի քանի գիտնականներ միաժամանակ խոստովանում են եվոլյուցիոն ուսումունքի ճշմարտությունը և հավատում են աստծուն, արարչագործությանը:

Այդ հարցի շուրջը շատ մութ բացարություններ են տալիս և խառնում մեր աստվածաբաններն ու աղանդավոր քարոզիչները, վորոնք պլնդում են, վոր Դարվինն ել իրը թե հավատում եր աստծուն:

Դարվինի զրքերի մեջ բազմաթիվ եջեր կան, վորոնց կարելի յե այլ բացարություն տալ, այսինքն՝ վոր նա ամենակտրուկ կերպով հերքում եր աստվածաշնչի հայացքները և հավատը:

Բայց իսկապես կան շատ գիտնականներ, վորոնք քաջություն չունեն հրաժարվելու աստծուն և աստվածաշնչին հավատալուց, թեվդա չպետք ե մեզ առանձնապես զարմացնե, զե վոր կրոնը մինչև այժմ աշխատավորներին շահագործելու ամենալավ միջոցներից մեկն ե: «Յեկեղեցու հայրերից» շատերը և նրանց գիտնական բարեկամները վաղուց և լավ հասկանում եյին այդ և, չհավատալով

ՀՀ Ազգային գրադարան



NL0261582

13470

60 40т.



Б. ЗАВАДОВСКИЙ и
С. БЕССМЕРТНАЯ
Что говорят
о происхождении животных
наука и религия

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.